

ԿԻՆՐ ՎԱՐՈՒԺԱՆԻ «ՀԵԹԱՆՈՍ ԵՐԳԵՐ»-ՈՒՄ

ՎԱԶԳԵՆ ԳԱՐՐԻԵԼՅԱՆ

Կինը Դանիել Վարուժանի «Հեթանոս երգեր»-ում խորհրդանշին է գեղեցկության և հաճույքի: Այդպիսիք են, օրինակ՝ Նազենիկը («Հարճը»), շերքեզուհին («Հեթանոսական»), լոգանք ընդունող կանայք («Արևելյան բաղնիք»), Կլեոպատրան («Կլեոպատրա»), հովվուհին («Գրդանք») և ուրիշներ:

Վարուժանի այս երգերում կան և՛ «ինքնին» գեղեցկություններ, և՛ վայելումներ, կրքեր, մարմնական նվիրումներ: Եվ բնական է, որ, ինչպես Վարուժանի, այնպես էլ մյուս «Հեթանոսականների» այսպիսի երգերը պիտի տեղիք տալին տարամերժ կարծիքների: «Հեթանոսականների» դեմ գրեցին Ա. Շիրվանզադեն, Վ. Տերյանը, Հ. Սուրխաթյանը, Կ. Ջարյանը և շատ ուրիշներ: Նրանց հատկապես վրդովում էին երևույթի արտաքին կողմը, բաց նկարագրությունները: Ռեալիզմի մեծագույն ներկայացուցիչ Շիրվանզադեն վայրացրել էին այդ երգերի նատուրալիստական նկարագրությունները, և դա, անշուշտ, տեղին էր, քանի որ «Հեթանոսականներից» շատերի (Ա. Տատուրյան, Հ. Սիրունի, Ա. Զարբգ, Լ. Էսաճանյան, էդ. Գուլանճյան) բազմաթիվ գործեր այդպիսի տպավորություն էին թողնում: Նրանք չկարողացան հաղթահարել նյութի դիմադրությունը, մնացին լոկ երևույթի նկարագրության սառմամաններում: Մինչդեռ բաց նկարագրությունների, մերկությունների պատկերումը իսկական, մեծատաղանդ արվեստագետների կողմից հանրությունը միշտ էլ սիրով է ընդունել: Փարիզյան նկարչական մի ցուցահանդեսի մասին խոսելիս Շիրվանզադեն գրել է. «Կինը մերկ է շատ կտավների վրա, բոլորովին մերկ... Կինը այստեղ հիացման, ոգևորության և անվերջ ստեղծագործության առարկա է»¹ արվեստագետի համար: Եվ այն մարդկանց, ովքեր բողոքում էին այդ «մերկությունների» դեմ, Շիրվանզադեն պատասխանել է. «Մի՞թե մերկ չեն հունական և հռոմեական արձանները: Եվ ո՞ր ապուշը այսօր կարող է հանդգնել ասելու, թե հույները գեղարվեստի մեջ մտքերել են անբարոյականություն: Եվ ինչո՞ւ մերկությունը ներելի լինելով գեղարվեստի մի ճյուղի համար, աններելի է մյուս ճյուղերի համար: Մի՞թե պատկերը ավելի գրգռիչ է, քան արձանը»²:

Վարուժանը, չնայած առանձին գեհհիկ պատկերներին («Ո՛ր, Տալիթա», «Սաղունական» բանաստեղծությունների մեջ), արվեստի մեծ ուժով հաղթահարեց նյութի դիմադրությունը և մերկության գալթակղությունից խուսափելով՝ գտավ նրա մեջ գեղեցկության և կենսասիրության երանգը, ծավալեց ու ընդգծեց այն, և կինը դարձավ կյանք ու արվեստ:

Բնությունը լի է պոեզիայով, պոեզիայով լեցուն է նաև մարդը, մարդկային գեղեցիկ մարմինը, ասում էր Վ. Բելինսկին: Եվ այդ կյանքի պոեզիան

¹ Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1962, էջ 359:

² Նույն տեղում:

մարդկային մարմնի մեջ ամփոփվում է գեղեցկության տեսքով: Մի գեղեցիկ կին ինքնին մեզ դուր է գալիս, որովհետև գեղեցկությունը հենց այն պոեզիան է, որ հաճելի է մեր էությանը: «Գեղեցիկ ու սիրելի բան են ճշմարտությունն ու առաքինությունը, բայց գեղեցկությունը նույնպես գեղեցիկ ու սիրելի է և մեկը մյուսին արժե, մեկը մյուսին փոխարինել չի կարող, բայց թե՛ մեկը, թե՛ մյուսը կազմում են մեր ոգու պահանջը: Ահա թե ինչու հին հույներն իրենց բանաստեղծական բազմաստվածության մեջ աստվածացրել էին ոչ միայն ճշմարտությունը, գիտելիքը, հզորությունը, իմաստությունը, քաջությունը, արդարությունը, ողջախոհությունը, այլև գեղեցկությունը, որ ուղեկցվում է սիրո ու տենչանքի խարիտաներով»³:

Վարուժանը արվեստի մեծ ուժով պատկերեց կնոջ մերկ մարմինը և զարմանալի կախարհանքով ընթերցողին որոշակի հեռավորության վրա կանգնեցրեց այդ մերկությունից: Նա ընթերցողին ներշնչեց շխորհել այդ մերկությանը տիրանալու մասին, այլ պաշտել այն, լցվել նրանով ու զգալ արև: Այդպես էլ Վարուժանը պատկերացնում էր իր հերոսուհուն և ձգտում էր այդպես կերտել նրան «Հեթանոս երգեր» շարքի առաջին իսկ բանաստեղծության մեջ, ուր հստակորեն սահմանել է իր նպատակ-ձգտումը:

Կ'ուրեմ ըլլա քու մարմարիտնըդ պեղված
Ուլիմպոսի ամենեն խոր արգանդեն.
Եվ իմ մուրճիս տակ ըզգենու հըրեղեն
Միս մը կընոջ, լույսով, տենդով սըրարբած:
Աչքերդ ըլլան վիհեր՝ ուր մարդ երբ սուզի՝
Հավերժին մեջ անմահացած ըզգա գինք.
Գիծերդ անեղծ ըլլան, ըլլան քու ըստինք
Դաշնակություն մ'ուր կենսահյուսթը հուզի:
Մերկ ըլլաս դուն բանաստեղծի մ'հոգվույն պես,
Եվ հեթանոս այդ մերկությանդ ներքե
Տառապի՝ մարդն ալ շրկընա դըպչիլ քեզ:
Թե հարկ ըլլա զոհ մը ընել քեզ պարգև,
Բագինիդ ես պիտի ուզեմ մորթըվիլ՝
Որպեսզի կուճդ ըմպե արյանս հուսկ կաթիլ⁴:

Հիրավի, Վարուժանի պատկերած մերկությունները նման են արվեստի գլուխգործոց այն արձաններին ու կտավներին, որոնց առջև կանգնած մարդը զգում է գեղեցկության կարոտը, տառապում է այդ կարոտից, բայց բնավ չի մտածում դիպչել նրանց: Ինչպես այդ քանդակները, գեղանկար-պատկերները, այնպես էլ Վարուժանի «մերկությունները» արվեստի ստեղծագործություններ են՝ որոնց մեջ կոնկրետ կնոջ պատկերից ընդհանրացված է մի ուրիշ՝ ընդհանրապես կնոջ պատկեր, որպես աստվածային արարչության գլուխգործոց: Ինչ-որ տեղ մոռանում ես նաև սեռը և հիանում ես, թե ինչպես գեղեցիկ է կերտել արարիչը կին (մարդ) էակին, կնոջը, որ Վարուժանը ան-

³ Վ. Բելինսկի, ֆիլիսոփայական ընտիր երկեր, Երևան, 1956, էջ 67:

⁴ Դաշնիկ Վարուժան, Բանաստեղծություններ, Երևան, 1955, էջ 215: Այս գրքից բերված մյուս մեջբերումների էջը կնշենք տեղում:

վանում էր «Դաշնակության ու գեղի աստվածակերտը գոհար» («Հարճը»), «մանրանկարի տիեզերքի գեղեցկություններուն»⁵։ Եվ միթե գեղեցիկ մարմնի պաշտամունքից թելագրված շեն ստեղծվել մերկ մարդկանց նկարներն ու քանդակները, բալետային արվեստը, սպորտային մրցումները։ Մարդու մարմնի, գեղեցիկ մարմնի պաշտամունքը, անշուշտ, մարդկային բարբարոսության դեմ կարող էր կռվան լինել, թեև ոչ անմիջաբար, բայց ներշնչել մարդկանց՝ չսպանել մարդուն, չփշրել գեղեցկությունը, չլկել մարդկային մարմինը։ Մարդկային գեղեցիկ մարմնի պաշտամունքը կնրբացնեի բիրտ հոգիները, կհաղորդեր կենսասիրություն և սեր մարդու նկատմամբ։

«Եվ այսպես,— հաստատում է Հր. Թամրազյանը,— մարդու ներքին ու արտաքին գեղեցկության հարցը ստանում է հասարակական արժեք։ Հեթանոսության թեման, արտաքին հեռավորությամբ հանդերձ, ներքնապես ստանում է արդիական շերտեր և սոցիալական բնույթ, դառնում հարադատ 20-րդ դարի համաշխարհային պոեզիայի մարդասիրական միտումներին»⁶։

Նման ներշնչումներ են հաղորդում և՛ պարող հարճի, և՛ լողացող գեղուհիների պատկերները։

Ռոլոր մերկ են ու չըքնաղ,— թևերն իրենց ծալեր են
լանջքերնուն վրա հոյաշեն՝ որոնց վրա կը դիզվին
Կույտերն իրենց ծիծերուն, պըտուկներով թըխագեղ (էջ 229)։

Լուսացնցուղ գմբեթից մաղվում են արևի շողերը, ինչպես մարգարտյա անձրև, և գոլորշին դառնում է արծաթյա։ մարմինները կարծես հրաշք արձաններ լինեն։ Քանդում են մազերը, հյուս առ հյուս, և դա հրաշք-գեղեցկություն է՝ կարծես ծփում է ամբողջ բաղնիքը։

Օ՜ գանգուրներն հորդառատ՝ իրենց կուրծքին վրա մերկ,
Օ՜ գանգուրները խըխում, կաթիլներով ծանրացած,
Որոնք բոբիկ ոտքերնուն սատափ ցողեր կը ծորեն...
Ի՞նչպես պատմել ձեր օծումն, ի՞նչպես պատմել ձեր զարդերն՝
Երբ մարմիննիդ կը սըրբեք, և կուռքի պես կը հագվիք... (էջ 231)։

Եվ ծնվում է համբուրելու ցանկությունը՝ մատների, մազերի, հոնքերի, թարթիչների, լանջքի։ Կիրք, որ վերածվում է պաշտամունքի։ Բանաստեղծը հիշեցնում է, որ նրանցից յուրաքանչյուրն ամուսնական մի առաջատար է երջանկացնելու։

Եվ լա՛նջքը ձեր՝ որ փաղփուկ մանյակներով ոսկեշար
Ամուսնական անկողինն նըշողուն ջա՛հը կըլլա (էջ 231)։

Բանաստեղծի ցանկությունն է, որ փողոցներով իրենց տներն շտապող հուրիների քայլերից քաղաքի սալարկները թարմանան, լողանքի հոտը հորդի ամենուր, լցնի հրապարակն ու ուղիները։ Այնժամ արևելյան այդ քաղաքի փողոցները՝

⁵ Դ. Վարուժան, Նամականի, Երևան, 1965, էջ 172։

⁶ Հր. Թամրազյան, Պոեզիան պատմության քառուղիներում, Երևան, 1971, էջ 121։

Պիտի ըզգան թե Մայիսն հետքերնուդ վրա կը ծաղկի,
 Եվ թարմացած մայիսերեն Գարոն, Գարոնը կ'անցնի (էջ 232):

Սա ոչ թե ցանկասիրություն է կամ կիրք, այլ գեղեցկության պաշտամունք և հաստատումն այն մտքի, թե գարնան նման արգասավոր է կինը՝ հղի գալիք հրաշքներով:

Այստեղից էլ կնոջ կենսանորոգ ուժի բնույթը: Կինը՝ կյանքի ստեղծող, մայր, կյանքի բեղունության խորհրդանիշ: Սիամանթոյին նվիրված դրական ասուլիսի ժամանակ իր բանախոսության մեջ Վարուժանը խոսելով Սիամանթոյին նախորդող արևմտահայ պոեզիայի մասին, ասել է. «Նույն ահեղ օրերուն հայ բանաստեղծական գրականությունը նախանձելի ուշին ուներ: Հիները գացիր կամ քաշվեր էին: ...Կային նորերը, ոչ միշտ անտաղանդ, բայց կքած բռնակալության թաթին տակ, կ'երգեին կինը, բայց ոչ այն կինը, որ իմաստն է կյանքին քանդող ու ստեղծող ուժերուն, կինը բավղային հոգիով, սրտերու դավադիր, ճակատներու նվաճող, կամ այն կինը, որ մայր է միանգամայն ուսպենսյան ներուժ կազմով, արյունով կենսավետ, որուն լայնալիճ կողերուն մեջ կ'արգասավորին նոր կյանքեր, նոր ապագաներով: Էսկի պանդխտական արվեստը պիտի ըլլար այս, լավագույն արվեստը գուցե հասուն կյանքին: Բայց այդ նոր օրերուն երգած կինը պուպրիկ մըն էր՝ որուն այտերը որդան կարմիր քսեցին քիչ մը, ու գգվեցին զայն, օրորեցին երկա՛ր, երկա՛ր, քնարի օրորներով»⁷:

Հայ պոեզիայում կնոջ կերպարի նման ըմբռնման կիրառողը եղավ Վարուժանը. Դժվար չէ նկատել, որ այս բնութագրման մեջ Վարուժանը բացատրում է հենց ի՛ր գիրքը, կնոջ ի՛ր ըմբռնումը «Հեթանոս երգեր»-ում: Կենդանի, իրական, բազմաբնույթ կնոջ հատկանիշների միագումարով Վարուժանը պոեզիա էր բերում կնոջ նոր հասկացությունը, նրա երկակի էությունը («Իմաստն է կյանքին քանդող ու ստեղծող ուժերուն»): Կինը՝ մերթ իր «բավղային հոգիով» («Տրտունջք»), կինը՝ «սրտերու դավադիր» («Սիրտս է հոգնած»), կինը՝ «ճակատներու նվաճող» («Կլեոպատրա») ու մերթ որպես մայր՝ «ուսպենսյան ներուժ կազմով» («Ով Լալագե», «Օրհնյալ ես ի կսնախ»), Եվ ամեն դեպքում՝ կինը ոչ թե որպես պուպրիկ, այտերին մի քիչ կարմիր քսած, այլ լիարժեք, «արյունով կենսավետ», մարդ-արարած, տրոհող սրտով, արյան եռքով: Կինը որպես «էսկի պանդխտ» մեծ խորհուրդը կրող:

Կնոջ մարմնական գեղեցկությունը, ներդաշնակ ձևերը որքան էլ արվեստի ներշնչումներ լինեին, Վարուժանի հայեցողության մեջ ունեին նաև վայելքի իմաստ: Կնոջ հրաշք մարմինը, ի վերջո, նաև հրճվանք ու վայելք պարգևող մի գոյություն է: Եթե կինը ընդհանրապես մարդկանց համար ներդաշնակ գեղեցկություն է, ապա անհատի համար նաև վայելքի աղբյուր է: Կինը նաև կրքերի փոթորիկ է տղամարդու մեջ, և նման վայելքը միանգամայն մարդկային է: Տղամարդու և կնոջ հոժարակամ, սիրով միացումը կրկին գեղեցկություն է և սուրբ: Ո՛չ սերը, ո՛չ կիրքը չեն կարող լինել պարտադրված («Արմենուհին»): «Հեթանոս երգեր»-ի մեջ մարմնական վայելքի բոլոր պատկերներն էլ հոժարակամ նվիրումի պահեր են: Այդպես սիրով ու նվիրումով է

⁷ «Գրական ասուլիսներ», 2, Կ. Ադիա, 1913, էջ 25:

Նալինիկը փաթաթվում Տրդատին, Արքան՝ շերքեղունհուն։ Կիրքն էլ պիտի մաքուր լինի, անշահ ու անկաշառ։ Ուր սերը վաճառված է, կրքերն էլ ստոր են։ Դրանից է ծնվում ասելությունը «գահլիճներու փարթաւ կիներու» նկատմամբ («Ո՛ր, Տալիթա»)։

Սիրո և վայելքի փոխադարձության մեջ բանաստեղծը տեսավ մարդուն տրված դիրադույն հաճույքներից մեկը և խոսեց դրա մասին ազատ, անկաշկանդ, առանց կեղծ ամոթխածության, չվախենալով որոշ բարոյագետներից, որոնք մեղադրեցին նրան անգամ «պոռնոգրաֆիայի» մեջ։ Գրականության մեջ բնական, առողջ զգայականության, մարմնական կրքի նման արտահայտությունների մասին Ֆ. Էնգելսը գրել է. «Գերմանական սոցիալիստների համար էլ պետք է երբևէ գա մի պահ, երբ նրանք բացահայտ կերպով դեն կենտեն գերմանական ֆիլիսոփերական այդ վերջին նախապաշարմունքը, քաղբենիական կեղծ ամոթխածությունը, որը սակայն ծառայում է լոկ որպես քողարկում գաղտնի դադրախոսության համար։ Երբ, օրինակ, կարգում ես Ֆրայլիգրատի բանաստեղծությունները, ապա իրոք, կարելի է կարծել, թե մարդիկ բոլորովին սեռական օրգաններ չունեն։ Սակայն ոչ ոք այնպես չէր սիրում սուսուփուս լսել նրբագրգիռ անեկդոտ, ինչպես պոեզիայի մեջ պարկեշտ հենց այդ Ֆրայլիգրատը։ Ժամանակն է, համենայնդեպս, որ գերմանացի բանվորները սովորեն խոսել այն մասին, թե ինչով են նրանք իրենք զբաղվում ցերեկը կամ գիշերը, բնական, անհրաժեշտ ու չափազանց հաճելի բաների մասին խոսեն նույնքան անկաշկանդ, ինչպես ռոմանական ժողովուրդները, ինչպես Հոմերոսը և Պլատոնը, ինչպես Հորացիոսն ու Յուվենալը, ինչպես Հին Կտակարանը և Նոր Հռենոսյան լրագիրը»⁸։

Վարուժանը խոսեց այդ ամենի մասին, հիրավի, ինչպես Վ. Դավթյանն է զրոյ, «առանց կեղծ ամոթխածության», «քանի որ սնվել էր Հոմերոսով, Հորացիոսով ու նաև Քուլակով»⁹։ Եվ այդ երգերով Վարուժանը նոր խոսք էր ասում մեր նորագույն պոեզիայում։

Մարմնական վայելքի պատկերի զարգացման մեջ Վարուժանը սրբացնում է սիբուլ նվիրումը։ Ազատ, նվիրված սերը հրաշք է, որ տրված է միայն մարդուն։ Նման սիրո մի գեղեցիկ ձևերգ է «Գրգանք» բանաստեղծությունը։ Այսպիսի բանաստեղծություններ նկատի ունեն բելգիացի Ռ. Պոտարը, երբ նկատում էր. «Վարուժան գրած է սիրային բանաստեղծություններ, որոնք կը դասվեն ամենեն շքեղներու կարգին,— որ երբևիցե գրված ըլլան։ Մեր խարդախ ընկերություններուն մեջ սերը դարձած է քողարկված աստված մը, անծանոթ աստված մը, Վարուժանի բանաստեղծության մեջ մտնել, կնշանակի մտնել երկիր մը, ուր մարդ կհանդիպի դարձյալ այդ աստծուն, ամեն անկյունադարձի վրա»¹⁰։ Հենց միայն «Գրգանքը» բավական է ժխտելու համար այն կարծիքները, որոնք «Հեթանոս երգեր» շարքը բնորոշում էին որպես սիրո մեջ տափանքի, կրքի արտահայտություն։

Բանաստեղծության քնարական հերոսը՝ ազատ բնության ազատ զավակը, սիրագործով կարոտով սպասում է սիրած աղջկան։

⁸ ԿԿ. Մարքսը և Ֆ. Էնգելսը արվեստի մասին, հ. II, Երևան, 1964, էջ 444։

⁹ «Սովետական գրականություն», 1974, № 4, էջ 106։

¹⁰ «Հոլանդական Դանիել Վարուժանի», Փարիզ, 1958, էջ 87։

Ափը լճակին մենավոր՝
 Ուր տընակս իմ կախարդորեն շիներ եմ՝
 Ձեռն ի ծընուտ ըսպասեցի իր գալուն։
 Նըռենիին տերեւներուն տակ բոսոր,
 Նուռի մը պես ճեղքըված,
 Սիրտըս, շիթ շիթ, արյուն թորեց ծունկերուս՝
 Կարոտը սե՛րս արյունեց.
 Եվ ամիսներ բովանդակ
 Եղնիկի պես լացի գոհար արցունքներ
 Ափը լճակին մենավոր (էջ 233)։

Այս կարոտաբաղձ սպասումը իզուր չէր. լքելով իր մոլորուն գառնուկներին, դեն շարտելով տոսախ սրինգը, վարսագեղ հովվուհին՝ նրա սիրած աղջիկը, գալիս է։ Ու երբ նա ներս է մանում, տնակը լցվում է բույրերով ու լույսերով։ Տղան գոգ-գոգ զարնան վարդեր է բերում, նունուֆարի փափուկ ծղոտներ, հողի և ջրի ծաղիկներ, տատրակների աղվամազ և սիրո դրզարան-անկողին է պատրաստում։

Վարդերուն վրա փրփրեցավ
 Իր մերկութունն երե՛ք անգամ կաթնային... (էջ 235)։

Եվ առաջին համբուլից արբեցած, աղջիկը քնում է սիրած տղայի կրծքին։ Կարոտած սերը վերածվում է քնքշանք-շոյանքի։ Եվ որպես իրար հյուսված բաղնիքներ խանդակաթ, որպես ծաղիկ մի նոր՝ ծաղկում է նրանց սերը։ Այդ մաքուր, անբիծ, անապական սիրով համակվում է ողջ աշխարհը, բնությունը միանում է նրանց, համակվում ծլարձակելու մեծ կարողությամբ, զարնան մեծ երգն է նվագում։

Կարապներն ա՛լ թուխս նըստան.
 Եղեգնուտին մեջ քամին մեղմ նըվազեց
 Մըլարձակման մեծ օրենքները Գարնան.
 Նունուֆարի հոտված ծղոտները դարձյալ
 Զուրին մեջեն արձակեցին փթիթներ։
 Մերին սըրտերն ունկնդիր
 Իրարու մեղմ տըրոփյունին՝ սընջեցին.
 Եվ լիճին խորն, աստղերուն վրա թևամփոփ,
 Կարապներն ա՛լ թուխս նըստան (էջ 235)։

Բնության ձայներն են հնչում մարդկային հոգիների խորքում, արթնացնում բնական զգացումներ, դուրսում ու մղում քաղցր մեղքերի։ Ունկնդիր հովտից եկող աղվոր և դյութիչ՝ ձայնին, որ համոզում էր, թե ինքը լեռների ոգին է և տիրում է ամեն կախարդանքի, որ համոզում էր աղբյուրն իջնել և ուլը զոհել իրեն՝ արքունքի հասած հովվուհին գնում է դեպի աղբյուրը, որովհետև այդ ձայնը «կարծես իր արյունին հետ կխոսեր»։ Բնության, իր մեջ հնչող կանչով նա արու ոգուն զոհաբերում է իր ճերմակ ուլը և հրապուրված՝ «իր անուշ մեղքը» լալիս («Առաջին մեղքը»)։

Բնության բեղունության, արգասավոր աշնան զգացողությունն է մղում հերոսին, բերքահավաքի այգում գրկելու և համբուրելու արևախանձ եթովպուհուն («Ով Լալագե»)։ Եվ սխալ է՝ այդ արարքի մեջ տեսնել անբարոյականություն։ «Ով Լալագե»-ն ձոն է մայրության պատրաստվող կնոջը, որ հար և նման է կութքի մեջ գտնվող այգուն։ Ձոն է բնության ու մարդու մեջ ուժ-ճացող զգացմունքներին, արյունի ընդվզումներին։ Ձոն է աշխատավոր առույգ հողիների յվարթ երգ ու ծիծաղին։

Բանաստեղծության քնարական հերոսը (որ հեթանոս օրերի մի այգե-տեր է) երանությամբ հիշում է անցած մի աշնան, այգում կատարված մի դեպք, խոստովանում է կնոջը (որին սիրում ու պաշտում է) իր մի «զան-ցանքը»՝ եթովպուհուն համբուրելը։ Բայց զանցա՞նք էր արդյոք դա։ Պտղա-բերձ աշնան օրվա, կութքի մեջ գտնվող այգու բուրումների ավելի կենդանի ու զգայական պատկեր գուցե անհնարին է.

Արդ, հիշեցի՞ր գու այն օրն, ո՞վ Լալագե։
Ակոսներուն և կողերուդ ընդմեջեն,
Այն ծանր ափսոս հղությանդ,
Կ'անցներ ալիքն հողին հորդող ուլժերուն։
Արեգակի արյունին նուռն էր՝ ծոցիդ
Մեջ հասունցած։ Բուններն ի վար, ծառերուն
Կը ծորեին շիթ առ շիթ
Հուլզերը՝ նման արցունքի։
Քու համբուրված մարմինիդ պես ծանրակիր
Հողն էր թըրջված, էր կպչուն
Քաղցուներով և մեղրով։
Անուշաբույր իր բեռին տակ կը կըքեր .
Դեղձենին քե՞զ նմանակ,
Քու ծիծերուդ նըմանակ
Ողկույզներն այն լեցուն էին՝ ապագա
Ծիծաղներով, ցընծությունով և կայթով։
Ու իրիկունն այն՝ կուռեր կո՛ւրծքը հողին...
Հընձաններուն քովեն անցանք մենք դյուծված
Նազմուզին բարկ բուրումեն,

* * * * *

... Հընաբույր լայն կարասներ
Նվիրագործված ամեն տարի, ծոցիդ պես,
Լեցուն էին գինիներով—ծոցի՞դ պես—
Լեցուն շողո՞վ, հաղթանակո՞վ, բերկրանքո՞վ,
Հավերժակա՞ն կյանքերով։
Հետըդ անցանք ծիծաղներու, 'երդերու
Մեջեն առույգ, զոր աշխատող հոգիներ
Կը պոռթկային տերևներուն ներքևեն.
Ու բուրումներն աշունին
Կը հասներին մինչև աստղերն արծարծուն... (վջ 237—238)։

Այս արբշիռ բույրերի հորձանքում, կարծես, այրվում է հերոսի սիրտը, կյանքը հորձանք է տալիս հոգու խորքերում, և նա ունենում է ճենդվզումներ

արյունին»։ Ու այստեղ, անզուսպ ցանկությամբ, երբ կինը մեկդի նուռ է՝ անուշ անում, նա գրկում և «հեշտաբուռն շրթներով» համբուրում է թուխ եթովպուհուն։

Անցած օրերի այս պատմությունից արտասվող լալագեին հերոսը հանգրստացնում է։

Այն հեռավոր աշունին
Բուրումներուն մատնը շուրթյանը համար,
Ո՛վ աշնագեղ լալագե,
Արտասվել շարժե՛ր այսօր։ (էջ 238)։

Աշնան բուրումներն էին «մեղավորը»։ Ահա «մեղքի» լիարժեք բացատրությունը։ Իսկ այդ քաղցր հուշի համար պետք է ոչ թե տրտմել, այլ հոգեպես հրճվել։ Միանգամայն իրավացիորեն Պ. Սևակը «Ով լալագե»-ի մասին գրել է. «Դժվար կլինի պատկերացնել մայրական բեղունության, կնոջ արգասավոր ծանրության առավել հմայուն, մաքուր և սրբազան պատկեր... Վերջինս բանաստեղծական հորինվածքի ներդաշնակության, հղացման օրիգինալության և պատկերման հոգեհույզ խորության տեսակետից մի իսկական գլուխգործոց է, անխառն ներշնչանքով ծնված, մի յուրօրինակ հանցանքի խոստովանություն...»¹¹։

Գ. Լևոնյանին դրած նամակում Վարուժանը խոսում է այդ բանաստեղծության գտած ընդունելության մասին. «Ով լալագեի» դեմ աղմկողներուն թիվին ավելի հիացողներ եղան իբրև ձևի և խորքի հաջող արտագրություն, այնպես որ մինչև այսօր զղջացած չեմ գրած ըլլալուս վրա»¹²։

Այդ օրերից տարիներ հետո «Ով լալագե»-ի մասին Վ. Շուշանյանը գրեց. «Զեզմե ո՛վ կհիշե, ըսեք, այն թրթռուն ու աշնանային ողկույզներով, գինեբույր քաղցուով և՛ կրքոտ, և՛ տաքարյուն կիներու բուրումներով լեցուն երգը, որուն թափանցիկ ու հղի տողերուն մեջն մարդ խոշոր աչքերով կտեսնե ծանրաբեռ ու հարուստ որթատունկերը, որ կգեղնին, այգիներու պարագնած հորիզոնը, ընկուզենիներ մեծ ու լայն շարքերով և գարնանագեղ աղջիկներ, որ խաղող կթնդեն հնձանին մեջ...»¹³։

Կնոջ գեղեցկության նկատմամբ Վարուժանի վերաբերմունքն ունի տարբեր աստիճաններ. կինը որպես աստվածային հրաշք, աստվածակերտ գեղեցկություն, որպես արվեստ, որ նայողին հոգեկան հաճույք է պատճառում, կինը որպես գգվանքի համար ծնված արարած, մարմնական հաճույքի հաղորդող, կինը որպես սիրո ներշնչում և սիրո վայելք։ Եվ, ի վերջո, այդ սերը, այդ վայելքը ավարտվում են մի սրբազան իրավիճակով՝ մայրությամբ։ Հենց այդ մայրության փառաբանությունն են «Ով լալագե» և «Օրհնյալ ես ի կանայս» բանաստեղծությունները։

Աստվածամորն ուղղված սրբազան աղոթքի խոսքերը՝ «Օրհնյալ ես դու ի կանայս», Վարուժանն ուղղում է սովորական կնոջը, որ պատրաստվում է մայր դառնալու։

11 Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1976, էջ 333։

12 Գ. Վարուժան, Նամակների, էջ 203։

13 Վազգեն Շուշանյան, Երկիր հիշատակաց, Երևան, 1966, էջ 142։

... Օրհնյալ՝ ըլլաս, Մարիամ,
Դուն, որ անհուն գորովով
Կողերդ ինձի կուտաս, և ոսկերդ ուրիշի
Ոսկրի մ'համար կը քամես,
Դուն որ կ'ըլլաս ամենեն
Մաքուր ակոսն ակոսներեն բեղմնավոր
Ու ամենքեն չըքնաղ թաղարը՝ բոլոր
Թաղարներեն շուշանի՝
Օրհնյալ՝ ըլլաս հավիտյան:
Դուն՝ որ ըղգոն, կը կըրես
— Խեփորին մեջ ինչպես մարգրիտ մը ազնիվ—
Աստվածատիպ Մարդը խորն այդ արգանդիդ՝
Օրհնյալ՝ ըլլաս, Մարիամ... (էջ 240):

Մայրության պատրաստվող կինը ոչ միայն օրհնյալ է ինքնին, այլև սրբություն է այրմարդու համար, ավելի սիրելի, որովհետև՝

Մեն մի զարկին մեջ երակիդ՝ ես կը զգամ
Տրոփյունը նույն իմ սրտիս
Եվ բողբոջումը արյունիս ծաղիկին՝
Որուն բուրումը կ'արբեցնե զիս և քեզ,
Եվ սերն է մեր երկուքին (էջ 240):

Սիրո ծաղիկն է կինը մեծացնում իր մեջ, և մայրությունը փառաբանելի է հենց դրա համար: Էակի պահպանման, կյանքի հարատևման աստվածային շնորհն է տրված կնոջը, դրա համար էլ նա երիցս օրհնյալ է:

Կինը, սերը, սիրով նվիրումը հենց այն հաճույքի գեղեցկությունն են, որ բանաստեղծը գրքի բնաբանում խոստանում էր երգել:

Կնոջ ու սիրո զգացմունքի գեղեցկության, բնության արգասավորության ու կյանքի բեղունության փառաբանումը «Հեթանոս երգեր»-ում բնականորեն պետք է ուղեկցվեր հեթանոս աստվածների փառաբանությանը, տվյալ դեպքում՝ հատկապես մի քանիսի, որ հովանավորներն էին սիրո, գեղեցկության, բեղուն բնության, ազգային կենդանության: Անահիտը, «...որ է փառք ազգիս մերո և կեցուցիչ... որ է մայրն ամենայն զգաստությանց, բարերար ամենայն մարդկան բնության»¹⁴, Աստղիկը՝ «Դուստրը նոյ նահապետի», գեղեցկության, սիրո և հեշտության աստվածուհին, Վահագնը՝ առնականության, զորության աստվածաշայրը, կրակն մազերով, բոցն մորուսով խարսյաշ աստվածը որ, ըստ առասպելի, ամուսինն էր Աստղիկի¹⁵: Եվ վերջապես Վանատուրը՝ հյուրընկալ, հյուրասեր, օտարներին և պանդուխտներին ընդունող աստվածը, որի տոնը տոնում էին Ամանորին՝ նավասարդի առաջին օրը, որպես «ամենաբեր նորոց պտղոց» տոն:

¹⁴ Ա լ ի շ ա ն, Հին հավատք կամ հեթանոսական կրոնը հայոց, Վենետիկ, 1895, էջ 260:

¹⁵ Հիշյալ երեք հայ հեթանոս աստվածները հաշտ և միասին են եղել: Տարոնի Աշտիշատի Վահեճյան մեհյանը երեք բագին ունի՝ Վահագնի, Աստղիկի և Անահիտի:

Այսպիսով, ինչպես տեսանք, «Հեթանոս երգեր»-ում Վարուժանը պատկերել է կնոջ բազմաբնույթ էությունը: Կինը, ըստ Վարուժանի, բնության հրաշք գեղեցկություններից մեկն է, արվեստի աստվածային ստեղծագործություն, որ ստեղծվել է մարդկանց հոգեկան ու մարմնական հաճությամբ պարգևելու համար: Կինը «ինքնին» գեղեցկություն լինելով՝ նաև վայելքի աղբյուր է: Վարուժանը սրբացնում է սիրո և վայելքի փոխադարձությունը, որ հասցնում է մայրության սրբազան իրավիճակին:

ЖЕНЩИНА В «ЯЗЫЧЕСКИХ ПЕСНЯХ» ВАРУЖАНА

ВАЗГЕН ГАБРИЕЛЯН

Резюме

Образ женщины занимает доминирующее место в книге Д. Варужана «Языческие песни». В своей поэзии Д. Варужан рассматривает женщину как божественное создание, чудодейственную красу природы, источник духовных и телесных наслаждений, видя в то же время цель ее жизни в святине материнства.

Культ женщины у Варужана обусловлен ненавистью к человеческой непорядочности, бесчестности, злобе, варварству, а также огромным его жизнелюбием.